ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Պետրոսյան Գոհար Մկրտիչի ԱՁ-ն ՄՄԱՌՎ-ԷԱՃԱՊՁԲ-2026/21 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Պետրոսյան Գոհար Մկրտիչի ԱՁ	Պետրոսյան Գոհար Մկրտիչի ԱՁ	ճտքավոր կոշիկներ	Պետրոսյան Գոհար Մկրտիչի ԱՁ	Նախատեսված են համազգեստային/ծառայողական օգտագործման համար: Մատակարարվող արտադրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային արտադրության և համապատասխանի գործող նորմատիվ իրավական և տեխնիկական պահանջներին: Կոշիկի բարձրությունը կրունկից մինչև վերև պետք է լինի 21-23սմ: Կոշիկի վրա պետք է լինի շղթա՝ մետաղական գլխիկով և պլաստմասսե ատամիկներով (ukk): Կոշիկի վերին մասը պետք է

						պատրաստված լինի բնական երեսնամշակված կաշվից՝ սև գույնի, 1.3–1.5 մմ հաստությամբ: Կաշին պետք է ապահովի օդաթափանցություն և ձևի կայունություն շահագործման ընթացքում, իսկ հաստությունը պետք է պահպանված լինի ամբողջ մակերեսով՝ տեխնոլոգիական թույլատրելի շեղումների սահմաններում: Քթամասը պետք է լինի փակ կառուցվածքի և պարտադիր ունենա ամրացնող միջադիր՝ մեխանիկական ազդեցությունների նկատմամբ դիմադրություն ապահովելու նպատակով: Քթամասը և կրունկային հատվածը պետք է համալրված լինեն կրկնակի պաշտպանիչ նյութով (գրանիտոր), որը տեղադրված է արտաքին շերտի տակ և ապահովում է լրացուցիչ ամրություն, ձևի կայունություն, մեխանիկական ազդեցությունների նկատմամբ դիմադրություն և կառուցվածքային պաշտպանություն շահագործման ընթացքում: Կրունկային հատվածում պետք է նախատեսված լինի կոշտացնող

						ներդիր՝ կրունկի ֆիքսման և ձևի պահպանման նպատակով: Ներքին երեսպատումը պետք է պատրաստված լինի շնչող տեքստիլ նյութից կամ բնական կաշվից (ըստ մոդելի): Ներքին ներբանը պետք է ունենա հիգիենիկ հատկություններ, ապահովի խոնավության կլանում և օդափոխություն, լինի անատոմիական ձևավորմամբ և համապատասխանեցված ոտքի բնական դիրքին: Ներբանը կարող է լինել շարժական, սակայն պետք է ապահովի կայուն տեղադրում շահագործման ընթացքում: Արտաքին ներբանը պետք է պատրաստված լինի մաշակայուն և հակասայթաքող նյութից: Ներբանի հաստությունը պետք է կազմի քթամասում՝ 0.8–1.2 սմ, կրունկային հատվածում՝ 1.5–1.6 սմ, իսկ կրունկի բարձրությունը՝ 2.0–2.2 սմ: Ներբանի կառուցվածքը պետք է ապահովի կայուն հպում տարբեր մակերեսների վրա և նվազեցնի սայթաքման ռիսկը: Կոշիկը պետք է լինի ճտքավոր կառուցվածքի, ամրացման համակարգը՝ կապերով: Կարի և միացման հատվածները

						պետք է իրականացված լինեն արտադրական տեխնոլոգիական պահանջներին համապատասխան՝ ապահովելով ամրություն և երկարակեցություն: Արտադրանքը պետք է ապահովի միասնական արտաքին տեսք և պահպանել ձևը շահագործման ընթացքում: Կոշիկների չափսերը պետք է լինեն 37-ից մինչև 47 ներառյալ: Չափսերի կոնկրետ բաշխումը և քանակները սահմանվում են Պատվիրատուի կողմից՝ ըստ ներկայացվող պատվերի, և մատակարարը պարտավոր է ապահովել պահանջվող չափսերի ամբողջական և ճշգրիտ մատակարարումը: Պատվիրատուն իրավունք ունի մինչև ապրանքների ամբողջ քանակով մատակարարումը պահանջել նմուշ (օրինակ)՝ տեխնիկական, կառուցվածքային և արտաքին տեսքի համապատասխանությունը գնահատելու նպատակով: Ներկայացված նմուշը ենթակա է հաստատման Պատվիրատուի կողմից, և մատակարարվող ողջ խմբաքանակը պետք է լիովին

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ИП Петросян Гоар Мкртич в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՍՄԱՒՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/21 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	համապատասխանի հաստատված նմուշին: Մատակարարը պարտավոր է ապահովել արտադրանքի համապատասխանությունը գործող նորմատիվ և տեխնիկական պահանջներին և Պատվիրատուի պահանջով ներկայացնել համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր (սերտիֆիկատներ, փորձարկման արձանագրություններ կամ այլ հավաստող փաստաթղթեր): технические характеристики
1					